



Հաստատված է  
Գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի  
\_5\_ նիստում  
“\_30\_” նոյեմբերի\_2018 թ.

---

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:
Ֆակուլտետի ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում կատարվում է հստակ ռազմավարական ծրագրին համապատասխանեցված: Կազմվել է հաշվետվություն:
Ներքին և արտաքին շահակիցների կարիքները և պահանջները վերհանելու նպատակով կատարվել են բանավոր հարցումներ: Այդ շրջանակներում կազմակերպվել են բազմաթիվ բաց դասախոսություններ, ցուցահանդեսներ և վարպետաց դասեր, որոնք առավել կնպաստեն մասնագիտական ճկունությանն ու զարգացմանը: Այս ամենից բացի ի նպաստ ներքին շահակիցների պարբերաբար կազմակերպվում են դասալսումներ, որոնք նպաստում են հնարավոր խնդիրների վերհանմանը և դրանց արագ կարգավորմանը:
Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:
Հաշվետու տարում համաձայն ռազմավարական ծրագրի ֆակուլտետում ծավալվել են բազմակողմանի աշխատանքներ, որոնք իրականացվել են ուսանողների ներգրավմամբ: Արդյունքների դիտարկումն ու վերլուծությունը բերում է այն եզրահանգման, որ ուսանողակենտրոն գործունեությունը դրական մեծ արձագանք է առաջացնում ուսումնառողների մոտ:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովում է կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Ֆակուլտետը հաշվետու տարում դասախոսներին և ուսանողներին իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն է ընձեռել:
Ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքային արդյունավետությունը ընդհանում է հստակ, ըստ սահմանված կարգի, համապատասխան ընդունված որոշումների:
Ֆակուլտետը հաշվետու տարում իր նպատակներին համապատասխան մշակել և իրականացրել է պլանավորում, մշտադիտարկել իր մեխանիզմներով:
Ֆակուլտետի ամբիոնների տարեկան աշխատանքային պլանները կազմված են համապատասխան ֆակուլտետի 2016-2020թթ ռազմավարական պլանի: Իրագործվում են լիարժեք, նպաստելով գործունեությանը:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները որքանով են համապատասխանում մասնագիտական որակավորմանը՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:
2017-2018 ուս. տարում կրթության բարելավման անհրաժեշտությունից ելնելով՝ վերանայվել է առկա բակալավրի, առկա մագիստրատուրայի և հեռակա բակալավրի ուսումնական պլանները, կրթական ծրագրերի մասնագրերը, առարկայական նկարագրերը՝ պահպանելով մասնագիտական որակավորումը: Ակնկալվող արդյունքները համահունչ են Որակավորումների ազգային շրջանակին:
Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:
2017-18 ուս տարում ֆակուլտետի երեք ամբիոններում ուսումնական գործընթացը կազմակերպվել է ուսումնական պլաններին և առարկայական նկարագրերին համապատասխան, պահպանվել են արդիական մեթոդները (ինտերակտիվ, հարց-պատասխան, գրույց, խաղային մեթոդներ, անհա-տա-կան, խմբային), հանձնարարվող նյութերը համապատասխանել են ուսումնասիրվող առարկային ներկայացվող պահանջներին:
Ուսանողների գնահատման համակարգը ֆակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:
Առաջնորդվում ենք վերամշակված կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման դրույթներին համապատասխան:

Կարգը սահմանում է գնահատման վերահսկման ձևերը, կառուցվածքը և վերահանձնումը՝ գիտելիքների ստուգման և գնահատման ընթացիկ, միջանկյալ և ավարտական եզրափակիչ գնահատման ձևերով: Համաձայն այս կարգի՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողի արդյունարար գնահատականը ձևավորվում է մի շարք բաղադրիչ գնահատումներից:

Գնահատման չափանիշները և ձևերը հասանելի են թե՛ դասախոսներին, և թե՛ ուսանողներին. առարկայական ծրագիր-նկարագրերի մշակման և ստեղծման, դրանցում առկա գնահատման համակարգի ներդրման պատասխանատուն դասավանդող դասախոսն է կամ դասախոսական խումբը:

Գնահատականների թափանցիկությունն ապահովվելու նպատակով այն քննարկվում է ուսանողի ներկայությամբ, գունանկար, կոմպոզիցիա, գծանկար և մի շարք այլ առանձնահատուկ առարկաների ընթացիկ ստուգումները և քննությունները անց են կացվում մասնագիտական հանձնաժողովների կողմից (ամբիոնի վարիչ, դասավանդող դասախոսներ և մասնագիտական խմբի ղեկավար): Օրինակ գունանկար, կոմպոզիցիա, գծանկար առարկաների քննություններն անց են կացվում ֆակուլտետի ճեմարահում՝ ցուցադրությամբ:

Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու, ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների: Ֆակուլտետի ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերին համահունչ աշխատանքներ: Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորություններն ապահովող և պարզաբանող մոտեցումներ:

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ֆակուլտետի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

Ֆակուլտետը 2017-18 ուս տարում կատարել է մի շարք ուսումնասիրություններ միջազգայնացման շրջանակներում, ծանոթացել ենք Սանկտ-Պետերբուրգի Ի. Ե. Բեպինի անվան պետական գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ակադեմիական ինստիտուտի, ռուսաստանի Ա. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի, Վարշավայի Էլյոլոգիայի և կառավարման համալսարանի, Սանկտ-Պետերբուրգի պետական արդյունաբերական տեխնոլոգիաների և դիզայնի համալսարանի, Տոմսկի պետական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայ-ռուսական սլավոնական համալսարանի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի և այլ համալսարանների ուսումնական պլաններին, ծրագրերին և ըստ այդմ կատարել ենք մասամբ համադրություն:

Երազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում ֆակուլտետի արվեստի տեսություն, պատմություն և կառավարում մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի մեկ ուսանող 2017-2018 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ուսումնառությունը կազմակերպվել է Վարշավայի Էլյոլոգիայի և կառավարման համալսարանում՝ 2018թ. փետրվարից մինչև 2018 թվականի հուլիս ամիսը: Նույն շրջանակներում նույն համալսարանից մեկշաբաթյա դասընթացներով հարդես եկավ Յան Միխայելովսկին:

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:

ՄԿԾ-ները մշակելիս կազմվել են աշխատանքային խմբեր՝ արտաքին և ներքին շահակիցների ընդգրկմամբ, որտեղ և վերհանվել են ակնկալվող վերջնարդյունքները:

#### IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված աշխատանքները, մեխանիզմները:		ուսանողների հավաքագրման
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:		
Բակալավրի	առկա	576
	հեռակա	325
Մագիստրոսի	առկա	77
	հեռակա	-

Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Յեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	6	54
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	10	92

Հաշտու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:

Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:	
Բակալավր	8
Մագիստրոս	10
Ընդհանուր	18

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը

Գիտահետազոտական ծրագիր		ուսանողների թիվ
1	Երևան քաղաքի մշակութային առօրյան	10

Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը

Տպագրված աշխատանք		ուսանողների թիվ
1	Իմ ակունքները- հոդվածների ժողովածու	14

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Ֆակուլտետում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության՝ ՀՊՄՔ քաղաքականությանը համապատասխան հստակ մոտեցումներ :

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակները համապատասխանում են ՀՊՄՔ-ի քաղաքականությանը, պարբերաբար հրատարակվում են գիտական հոդվածներ, ձեռնարկներ, գրքեր:

Հաշվետու տարում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման աշխատանքները ֆակուլտետում:

Ֆակուլտետի դասավանդող մասնագետները ընթացիկ հաշվետվություններում ներկայացրել են տարեկան կատարված գիտական հրատարակումների մասին տեղեկություններ:

Ֆակուլտետի կողմից կատարվել են հարցումներ՝ դասախոսը և առարկան ուսանողի աչքերով: Վերլուծվել են կատարված հարցումները, հարցաթերթիկները գտնվում են համապատասխան ամբիոններում:

Հաշվետու տարում դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ֆակուլտետում :

Ֆակուլտետի ամբիոններում կազմակերպվել են միջոցառումներ՝ բաց դասախոսություններ (արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն), վարպետաց դասեր, հանդիպումներ (կերպարվեստի ամբիոն), հաշվետու համերգներ (երաժշտության մանկավարժության ամբիոն): Այս միջոցառումներից բացի ՀՊՄՔ-ի կողմից կազմակերպվել է մասնագիտական վերապատրաստումներ, որին մասնակցել են արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության, կերպարվեստի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի մեծամասնությունը: Այս գործընթացը նպաստել է կատարելագործման դրական ընթացքին:

VI. ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հետազոտական աշխատանքներ կատարվում են թե՛ դասախոսների և թե՛ ուսանողների կողմից: Մասնագիտական բնագավառում խոչընդոտներ չեն հանդիպել:

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ: ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկա սիշը	2018թ. հրապարակումների թիվ
1	Наука и просвещение /РФ/		2

2	Актуальные и научные исследования в современном мире /сб.научн.ст, Украина/		1
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկա նիշը	2018թ. հրապարակումների թիվ
1	Մետաքսի ճանապարհի թանգարանների և պատկերասրահների միջազգային դաշինքի ֆորումի նյութերի ժողովածու (Չինաստան)		1
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկա նիշը	2018թ. հրապարակումների թիվ
1	Հայագիտական հանդես	ԲՈՐ	3
2	Կակթեղ	ԲՈՐ	3
3	Հովհ.Այվազովկու 200-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու		3
4	Լրաբեր	ԲՈՐ	1
5	Հայ մանկավարժության երախտավորները ժամանակակից մանկավարժական մոտեցումների համաբնագրում		2
Հաշվետու տարում հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները մենկարկում են ղեկավարներ ամսին, նախատեսվում է կոնֆերանս:			
Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:			
Հետազոտական գործունեությունն ու ուսումնական գործընթացը փոխկապակցված ընթացք է, և այդ շրջանակներում կատարվել են հետազոտական աշխատանքներ, որոնք նպաստում են մագիստրոսական թեզերի լիարժեք կատարմանը:			

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ֆակուլտետում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը:
Կերպարվեստի ամբիոնին է պատկանում 25 արվեստանոց, 5 արվեստանոց-արհեստանոց և 4 ուսումնական կաբինետ, երաժշտության մանկավարժության ամբիոնին կից գործում են 1 նոտաների գրադարան, 30 ուսումնական-երաժշտական կաբինետ, Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանությանը կից գործում է 1 ուսումնական կաբինետ: Այս բոլորը բավարար չափով նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետությանը:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Հասարակական պատասխանատվության շրջանակներում կատարվում են այցեր հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, լուսաբանվում են մասնագիտությունների կարևորությունը արդի հասարակության շրջանում: Կազմակերպվում են շրջայցեր, խրախուսվում է հետաքրքրվածությունը: Բոլոր միջոցառումները լուսաբանվում են և բուհի կայքում և ֆակուլտետի համացանցային հարթակում:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը ծավալում է բազմակողմանի գործունեություն հաստատելով արտաքին կապեր ԱՊՀ և
---

<p>այլ երկրների բուհերի և անհատ արվեստագետ-գիտնականների հետ: Ստեղծվում են համապատասխան կամուրջներ, գործունեությունը շարունակականի վերածելու նպատակով: Աշխատանքները կատարվում են ֆակուլտետի կողմից բանավոր համաձայնությամբ:</p> <p>Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:</p> <p>Համագործակցության շրջանակներում ֆակուլտետում հյուրընկալվել են ԱԼԳԱՐԻԾ Նախագծային աշխատախումբը, այցելությունից հետո հաստատվել են կապեր կոնֆերանսներին մասնակցության շրջանակներում: Նույն նպատակով ընթանում է նամակագրություն որոշ ԱՊՀ մասնագիտական ֆակուլտետներ ունեցող բուհերի հետ: Երկկողմանի մշակվում են օնլայն համագործակցության եզրեր: գործընթացը կրում է շարունակական բնույթ:</p>
--

**X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

<p>Ֆակուլտետի աշխատանքներն իր կառույցի որակի ապահովման ուղղությամբ:</p> <p>Ֆակուլտետի որակի ապահովումը իրագործվում է «պլանավորում – իրականացում –գնահատում - բարելավում» կամ «ներդրում-գործընթաց-արդյունք» շրջափուլերով:</p> <p>Հավաքագրված տեղեկատվության ամփոփման, ինչպես նաև ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի ու ամբիոնների որակի ապահովման հանձնախմբերի համատեղ քննարկումների արդյունքում մշակվել է տարեկան ինքնավերլուծությունը:</p> <p>Բացի դրանից, որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման ժամանակ հիմք են հանդիսանում տեղական և արտասահմանյան առաջատար բուհերի բենչմարքինգի արդյունքները:</p> <p>Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները ամրագրված են որակի ներքին կառավարման համակարգի ուղեցույցում և ՀՊՄՀ կողմից մշակված այլ փաստաթղթերում:</p> <p>Որակի ներքին ապահովման համակարգը ենթակա է պարբերաբար վերանայման և բարելավման՝ հիմք ընդունելով հետադարձ կապի միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը:</p> <p>Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարներին՝ հարցաթերթիկների, և զրույցների միջոցով, քննարկվում է մեխանիզմների արդյունավետությունը: Առավել արդյունավետ են անանուն հարցաթերթիկների կիրառումը, ինչը հնարավորություն է տալիս անկաշկանդ արտահայտել կարծիքը:</p> <p>Դասախոսների կազմակերպում ամբիոնների վարիչի կողմից, հարցաթերթիկների կիրառում ամբիոնների գործունեության ընդհանուր որակի ամրագրման և հետագա բարելավման նպատակով: Առարկայական նկարագրերի, տրոհումների արդյունավետ ստեղծման նպատակով սեմինարների անցկացում, կլոր սեղանների, բաց դասերի կազմակերպում, ժամանակակից տեխնոլոգիաների ուսումնասիրության համապատկերում մաստեր կլասերի անցկացում: Փորձի փոխանակման և առաջատար գաղափարների ներդրման նպատակով կազմակերպվել են դասախոսություններ՝ ծանոթացում որակի ապահովման II-րդ ֆորումի արդյունքների հետ, II-րդ միջազգային ամառային դպրոցի՝ Modern trends in science: Scientometrics արդյունքների ներկայացում,բվերապատրաստումներ: Անցկացվել է գիտա-ժողով՝ «Культура и образование»:</p> <p>Գեղարվեստական կրթության ֆակուլտետի գործունեության թափանցիկությունը և հասանելիությունը ապահովում են ճիշտ ընտրված գնահատման չափորոշիչները և ռեֆերատների, կուրսային աշխատանքների, մագիստրոսական հետազոտությունների ներկայացման ընտրված ձևերը, ուսանողներին զերծ պահելով գրագողությունից, ուշադրությունը կենտրոնացնելով օգտագործված գրականության հավաստիությանը:</p> <p>Գեղարվեստական կրթության ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովը առաջարկում է ստեղծել մագիստրոսական թեզերի կենտրոնացված էլեկտրոնային համակարգ, որը ուսանողներին զերծ կպահի գրագողությունից:</p> <p>Գեղարվեստական կրթության ֆակուլտետի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմները և դրանց արդյունավետությունը մշտապես գտնվում են բոլոր հանձնա-ժողովների, ՀՊՄՀ-ի, ֆակուլտետի, ամբիոնների ղեկավարության ուշադրության կենտրոնում, սակայն ցանկալի կլինի առավել բարձրացնել շահառուների տեղեկացվածության աստիճանը:</p> <p>Ֆակուլտետի ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը որակի ապահովման գործընթացներին հաշվետու տարում:</p> <p>Գեղարվեստական կրթության ֆակուլտետի աշխատանքի որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված են ներքին և արտաքին շահակիցները, հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցներ, քոլեջներ, ուսումնարաններ, սակայն այդ բնագավառը կարիք</p>
---

ուևի առավել ընդլայնման և համագործակցության արդյունավետության բարձրացման, ինչն ավելի լայն հնարավորություններ կընձեռի ապագայում ուսանողներին աշխատանքով ապահովելու գործում:

- Որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված են ներքին (ուսանողներ, դասախոսներ) և արտաքին շահակիցներ (շրջանավարտներ, դասախոսներ, գործատուներ և այլն):

- Որակի աշխատանքային խումբը ձևավորվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից:

Ներքին շահակիցների համար գործում է հարցումների համակարգ: Հարցումների միջոցով ուսանողները ներկայացնում են կրթական որակի ինչպես նաև դասախոսական կազմի օպտիմալ նկարագրություն, որը կարող է լինել դրական և միևնույն ժամանակ ունենալ բացասական հետևանք:

Հանձնաժողովը ուևի իր աշխատակարգը, որը սահմանում է ՈԱ հիմնական գործառույթները`

ՈԱ չափորոշիչների, գործընթացների և ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորությունների և առաջարկների տրամադրում:

Ինչպես նշվեց վերևում, ֆակուլտետում, ամբիոններում ՈԱ գործընթացներն արդյունավետ կերպով իրականացնելու նպատակով ՀՊՄՅ բոլոր 10 ֆակուլտետներում 2013 թ.-ին ստեղծվել են ֆակուլտետների Որակի ապահովման մշտական հանձնաժողովներ, որոնց հաշվետու են ամբիոնի ՈԱ հանձնախումբը, որի հիմնական գործառույթներն են.

- ՈԱ հարցերի վերաբերյալ ֆակուլտետի խորհրդին երաշխավորությունների ներկայացում,
- ուսումնական ծրագրերի և դասընթացների համապատասխանեցում մասնագիտական 164 կրթական չափորոշիչների պահանջներին,
- ուսանողական հարցումների արդյունքների քննարկում և բարելավող միջոցառումների առաջարկում և այլն:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ամբիոններն են.

[Արվեստի պատմության տեսություն և մշակութաբանության ամբիոն](#)

[Կերպարվեստի ամբիոն](#)

[Երաժշտության մանկավարժության ամբիոն](#)